հասցե՝ Երևան 0039, Արտաշիսյան 46/1
հեռ.՝ 010303010, 010461841
mc@astvatsamayr.am

«ՍՈՒՐԲ ԱՍՏՎԱԾԱՄԱՅՐ»
ԲԺՇԿԱԿԱՆ ԿԵՆՏՐՈՆ
"SOURB ASTVATSAMAYR" MEDICAL CENTER JSC

№ 114-598 28 10 2024 թ.

Որոշում N ՍԱԲԿ-ԳՀԾՁԲ-24/47

ԷՅ ԴԻ ԳՐՈՒՊ ՍՊԸ-ին գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու վերաբերյալ

«Սուրբ Աստվածամայր» ԲԿ ՓԲԸ-ի կարիքների համար կազմակերպվել է ՍԱԲԿ-ԳՀԾՁԲ-24/47 ծածկագրով Կաթսայատան սպասարկման ծառայությունների գնման ընթացակարգ, որի շրջանակներում ընտրված մասնակից է ճանաչվել ԷՅ ԴԻ ԳՐՈՒՊ ՍՊԸ-ն (այսուհետ նաև՝ Մասնակից):

Հիմք ընդունելով «Գնումների մասին» ՀՀ օրենքի 36-րդ հոդվածի 3-րդ կետը, Պատվիրատուն 10.10.2024թ.-ին պայմանագիր կնքելու նախագիծը ուղարկել է Մասնակցին՝ առաջարկելով մինչև 17.10.2024թ-ը ներկայացնել հաստատված պայմանագիրը պայմանագրի և որակավորման ապահովումների հետ միասին: Գնման գործընթացի մասնակից հանդես եկած ԷՅ ԴԻ ԳՐՈՒՊ ՍՊԸ-ն՝ չներկայացնելով իր կողմից հաստատված պայմանագրի օրինակն ու պայմանագրի և որակավորման ապահովումները, զրկվել է պայմանագիրը կնքելու իրավունքից:

1. Հիմնավորում և եզրահանգում

«Գնումների մասին» ՀՀ օրենքի (այսուհետ՝ Օրենք) 35-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ Պայմանագրի և (կամ) որակավորման ապահովում ներկայացնելու պահանջի հիման վրա այն ստանալու օրվանից հետո՝ հինգ աշխատանքային օրվա ընթացքում, ընտրված մասնակիցը պարտավոր է ներկայացնել ապահովումը:

Օրենքի 36-րդ հոդվածի 3-րդ մասին համաձայն՝ եթե ընտրված մասնակիցը պայմանագիր կնքելու մասին ծանուցումը և պայմանագրի նախագիծն ստանալուց հետո սույն օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասով նախատեսված ժամկետում չի ստորագրում պայմանագիրը կամ պատվիրատուին չի ներկայացնում պայմանագրի և (կամ) որակավորման ապահովումը, իսկ կնքվելիք պայմանագրով կանխավճար նախատեսված լինելու դեպքում՝ նաև կանխավճարի ապահովումը, ապա նա զրկվում է պայմանագիրն ստորագրելու իրավունքից:

«Գնումների մասին» օրենքի (այսուհետ՝ Օրենք) 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետի համաձայն՝ Մասնակիցն ընդգրկվում է գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում, եթե՝

ա. խախտել է պայմանագրով նախատեսված կամ գնման գործընթացի շրջանակում ստանձնած պարտավորությունը, որը հանգեցրել է պատվիրատուի կողմից պայմանագրի միակողմանի լուծմանը կամ գնման գործընթացին տվյալ մասնակցի հետագա մասնակցության դադարեցմանը և մասնակիցը հրավերով և (կամ) պայմանագրով սահմանված ժամկետում չի վճարել հայտի, պայմանագրի և (կամ) որակավորման ապահովման գումարը,

բ. որպես ընտրված մասնակից հրաժարվել կամ զրկվել է պայմանագիր կնքելու իրավունքից:

Կարգի 32-րդ կետի 19-րդ ենթակետի համաձայն՝ հրավերով նախատեսվում է նաև, որ եթե մասնակցի՝ հրավերով նախատեսված գնումներին մասնակցելու իրավունք ունենալու մասին հավաստումը որակվում է որպես իրականությանը չհամապատասխանող, կամ մասնակիցը հրավերով սահմանված կարգով և ժամկետներում չի ներկայացնում հրավերով նախատեսված փաստաթղթերը կամ ընտրված մասնակիցը չի ներկայացնում որակավորման կամ պայմանագրի ապահովումը կամ համաձայնագիրը կնքելու նպատակով պայմանագիրը կնքած անձը չի փոխարինում տուժանքի ձևով ներկայացված որակավորման կամ պայմանագրի ապահովումը, ապա այդ հանգամանքը համարվում է որպես գնման գործընթացի շրջանակում ստանձնված պարտավորության խախտում

Ո Ր Ո Շ Ե Ց Ի

1.ԷՑ ԴԻ ԳՐՈՒՊ ՍՊԸ-ին ներառել գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում

2.ԷՑ ԴԻ ԳՐՈՒՊ ՍՊԸ-ի ներքոնշյալ տվյալները ուղարկել լիազորված մարմնին՝ ՀՀ Ֆինանսների նախարարությանը, ԷՑ ԴԻ ԳՐՈՒՊ ՍՊԸ-ին՝ գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու նպատակով:

Մասնակցի						
			գնումների գործընթացին մասնակցելու պայմաններին չբավարարելու իրավական հիմքը			
անվանումը	ՀՎՀՀ/ֆիզ. անձի դեպքում հանրային ծառայության համարանիշը	գործունեության հասցեն	խախտել է գնման գործընթացի շրջանակում ստանձնած պարտավորությունը, որը հանգեցրել է գնման գործընթացին տվյալ մասնակցի հետագա մասնակցության դադարեցմանը պայմանագիրը միակողմանի լուծելու եղանակով	խախտել է պայմանագրով նախատեսված պարտավորությունը, որը հանգեցրել է պատվիրատուի կողմից պայմանագրի միակողմանի լուծմանը	որպես ընտրված մասնակից հրաժարվել կամ զրկվել է պայմանագիր կնքելու իրավունքից	ցուցակում ներառելու մասին պատվիրատուի ղեկավարի կայացրած որոշման ամսաթիվը և գնման ընթացակարգի ծածկագիրը
ԷՑ ԴԻ ԳՐՈՒՊ ՍՊԸ	01329544	ք. Երևան, Մեծարենց փ. 23/2			որպես ընտրված մասնակից հրաժարվել է պայմանագիր կնքելու իրավունքից	28.10.204թ ՍԱԲԿ-ԳՀԾՁԲ-24/47

3. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ստորագրման օրվան հաջորդող օրը:

«ՍՈՒՐԲ ԱՍՏՎԱԾԱՄԱՅՐ» ԲԿ ՓԲԸ
ՏՆՕՐԵՆ՝

ՀՈՎՀԱՆՆԵՍ ԶՈՀՐԱԲՅԱՆ

Կատարող՝ Ա. Խաչատրյան
Գնումների մասնագետ
Հեռ. /010/ 30 30 10 /4/